

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ՈՃԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՈՃԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1950 - 2020-ԱԿԱՆ ԹԹ.)

ԲԵՐԲԵՐՅԱՆ ՎԱԼՏԵՐ

Երևանի պետական համալսարան

Էլ. հասցե՝ berberyannn@gmail.com

DOI: 10.24234/scientific.v2i45.95

ԱՄՓՈՓՈՒՄ

Որպես ինքնուրույն գիտակարգ՝ ոճագիտությունը ձևավորվել է նոր ժամանակներում, սակայն այն ունի հարուստ պատմություն: Ոճական երևույթների մասին առաջին պատկերացումները կազմավորվել են հնագույն ժամանակներում: Խոսքի առանձնահատկությունների մասին հույների ուսմունքը զարգացում է ունեցել հռոմեական մտածողների աշխատանքներում: Ոճի հարցերին և խնդիրներին անդրադարձել են հին աշխարհի մտածողներից **Սոկրատեսը, Արիստոտելը, Պլատոնը, Դեմոկրիտը** և այլք, որոնք, խթանելով այլ ժողովուրդների հետաքրքրությունը ևս, ճանապարհ են ուրվագծել ոճագիտության համաշխարհային ըմբռման, զարգացման և տարածման համար: Հունական և հռոմեական մտածողների գաղափարները, համոզմունքները, անցնելով երկար ճանապարհ, ոչ միայն չեն կորցրել իրենց արդիականությունը, արժեքն ու թարմությունը, այլև իրենց ուրույն տեղ են գրավել հայ և արտերկրյա տարբեր լեզվաբանների աշխատանքներում:

Հոդվածի նպատակն է վերլուծել հայոց լեզվի ոճագիտական աշխատանքների արդյունքները, տարբեր հետազոտություններում առկա դրույթները: Անդրադարձ է կատարվել ոճագիտական աշխատանքներում ոճերի դասակարգման տարբեր սկզբունքներին՝ ըստ իրադրության (իրադրական ոճեր), ըստ հեղինակային խոսքի հատկանիշների (անհատական ոճեր): Վերլուծել ենք գործառական ոճերի հիմնական տեսակներին (պաշտոնական, գիտական, գեղարվեստական, առօրյա-

խոսակցական, լրագրային-հրապարակախոսական) առնչվող և հայ ոճագիտական աշխատանքներում քննարկվող տարբեր դրույթները:

Քանալի բառեր¹ ոճագիտական միտք, գործառական, անհատական ոճեր, դասակարգում, ընդհանուր հատկանիշներ, պատկերավորություն, ոճական արժեք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանության մեջ ոճերի դասակարգման փորձեր կատարվել են վաղուց. առաջադրվել և մշակվել են տարբեր սկզբունքներ, մոտեցումներ, դասակարգումներ: Հայ ոճագիտության մեջ ոճերի ուսումնասիրությունը ընթացել է ռուս ոճագիտական մտքի զարգացումներին զուգահեռ: **Մ.Լոմոնոսովը**, օրինակ, հենվելով եռանդամ հակադրության վրա, ստեղծել է իր գիտական տեսությունը, որի միջոցով փորձել է բացահայտել ռուսերենի ոճական նոր համակարգի զարգացման և կազմավորման բարդ ու շարժուն ընթացքը: Նրա ոճաբանական այս տեսությունը հաճախ անվանում են «երեք ոճերի տեսություն» («բարձր», «միջին», «ցածր» ոճեր): **Վ.Վինոգրադովը**, ուսումնասիրելով ոճերը, առաջարկում է դրանք դասակարգել ըստ լեզվի գործառույթների՝ հաղորդկացում, հաղորդում, ներգործում: Հարկ ենք համարում նշել նաև, որ ոճերը դասակարգելիս նմանօրինակ մոտեցումները եղել են ավելի վաղ ժամանակներում՝ դեռևս անտիկ շրջանում:

Արտերկրյա տարբեր բառարաններում ներկայացվում են ոճերի տարբեր տեսակներ՝ ըստ տարբեր հատկանիշների՝ *ակադեմիական, առօրյա-կենցաղային, բանահյուսական, գեղարվեստական, գրասենյակային, գործնական, գրքային, լրագրային, հրապարակախոսական, վարչական, անհատական, գռեհիկ, գեղեցիկ, գրողի, խրթին, կատակային, հնարույր, չեզոք, մտերմական, հասարակաբան, վերամբարձ, ճոռոմ*:

Այսպես կոչված, դասական լեզվաբանության մեջ ընդունված է առանձնացնել ոճերի երեք տեսակ՝ գործառական, իրադրական, անհատական (Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., 1976):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության համար մեթոդաբանական հիմք է հանդիսացել եղած տեսական դրույթների համադրումը: Կիրառվել են վերլուծական, համեմատական մեթոդներ: Հոդվածում շարադրանքը ներկայացված է ըստ ժամանակագրության:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գործառական ոճեր: Գործառական ոճերը գրական լեզվի գործառման այն տարատեսակություններն են, որոնք կապված են հասարակական կյանքի տարբեր ոլորտների հետ: Գործունեության տարբեր ոլորտներում մարդիկ հաղորդակցվում են՝ կիրառելով լեզվական զանազան միջոցներ: Բնականաբար լեզուն ունի իր յուրահատկությունները. բառապաշար, արտահայտության ձև, տարբերակներ, չափանիշներ: Գործառական ոճերի դասակարգմամբ առաջինը զբաղվել են Պրահայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչները (Մատեզիուս, Գաուզենբլաս, Դոլեթել և այլք): Չեխ լեզվաբան **Ֆ.Տրավնիչեկի** «Լեզվական ոճերի մասին» աշխատությունում ներկայացվում են նախնական դրույթներ ոճերի գործառական տեսության մասին, որոնք հետագայում մշակվում են ռուս լեզվաբանների՝ **Ռ.Պիոտրովսկու, Դ. Ռոզենթալի, Վ. Վինոգրադովի, Ա. Գվոզդևի** և ուրիշների կողմից: Ռուս հետազոտողները առանձնացրել են գործառական ոճերի տարբեր խմբեր, այսպես՝ Վինոգրադովը գործառական ոճերը բաժանել է *գրքային ու խոսակցական, ինչպես նաև մենախոսական և երկխոսական խմբերի, Պիոտրովսկին՝ գրքային, գրական-խոսակցական և պարզ, հասարակ-խոսակցական, Մուրատը՝ գրական-խոսակցական, լրագրային, քաղաքական, պաշտոնական, գործնական, գիտական, մասնագիտական-տեխնիկական, պարզ-խոսակցական, մտերմական, Գվոզդևը՝ գործառական, գեղարվեստական գրականության, գիտահանրամատչելի գրականության, խոսակցական, հրապարակախոսական, Բուդաղովը՝ բանավոր-գրավոր, գիտական-գեղարվեստական* և այլն (Եզեկյան Լ., 2006): Ինչպես նկատում ենք, ռուս լեզվաբանները տարակարծիք են գործառական ոճերի քանակի հարցում. ոմանք շատացնում են այդ քանակը, ոմանք էլ, ընդհակառակը՝ միավորում ոճերը: Հարկ ենք համարում նշել նաև, որ գործառական ոճերին վերաբերող հարցերն ու խնդիրները ժամանակին հանգեցրել են բուռն վեճերի:

Գործառական ոճերի քննությունը ուշ է արժանացել հայ լեզվաբանների ուշադրությանը: Նրանք հիմնականում հետևել են ռուս լեզվաբանության ձեռքբերումներին: Ոլորտի առաջնեկներից մեկը՝ **Գ. Վահանյանը**, գործառական ոճերը անվանում է խոսքի ոճեր. դրանք են՝ *գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական, պաշտոնական, խոսակցական*: Նա հիմնականում բնութագրում է գեղարվեստական և գիտական ոճերը: Հեղինակը գիտական ոճը սահմանում է հետևյալ կերպ. «Գիտական ոճ ասելով հասկանում ենք մի ոճ, որն օգտագործվում է գիտական գրականության մեջ: Նա ծնունդ է առնում համաժողովրդական գրական լեզվից, կատարում է նույն ֆունկցիան, ինչպես լեզվի մյուս ոճերը և չունի խիստ տարբերվող ներքին որակ» (Վահանյան Գ., 1956): Գ. Վահանյանը ներկայացնում է որոշ ոճերի էական տարբերությունները, որոնք, ըստ էության, նորություն էին: «Գրողը մտածում և մտածածը, իրականությունն արտահայտում է պատկերների միջոցով, իսկ գիտնականը՝ տրամաբանական դատողությունների միջոցով, անելով տրամաբանական հետևություններ: Գրողը ցույց է տալիս, իսկ գիտնականը ապացուցում, մեկը հիմնականում ազդում է ընթերցողի սրտի, մյուսը՝ մտքի վրա» (Վահանյան Գ., 1956): Այս երկու ոճերն ունեն նաև սերտ առնչություններ և կարող են փոխներթափանցվել, օրինակ՝ Մ. Խորենացու, Եղիշեի երկերում գիտական և գեղարվեստական ոճերը միաձուլված են:

Գ. Զահուկյանը գործառական ոճերը դիտարկում է որպես գրական լեզվի տարատեսակներ: Ըստ հետազոտողի՝ գործառական ոճերը լինում են *առօրյա-խոսակցական, վարչագործարարական, գիտական, հրապարակախոսական, գեղարվեստական*: Գիտական ոճի մասին խոսելիս հեղինակն այս ոճի մի տեսակ է առանձնացնում՝ *գիտահանրամատչելի* ոճը: Այն բնորոշ է ոչ մասնագետ ընթերցողների համար նախատեսված գրքերին, գրքույկներին, հոդվածներին, հանրամատչելի զեկուցումներին ու դասախոսություններին (Զահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., 1976): Խոսքը, ըստ էության, առավել ազատ է. ընթերցողին, ունկնդրին հասկանալի: Որպես նորույթ՝ Գ. Զահուկյանը բնութագրում է ոճերը՝ համեմատելով և հակադրելով մեկը մյուսին, այսպես՝ գեղարվեստական ոճը մոտենում է առօրյա-խոսակցական ոճին, հակադրվում՝ վարչագործարարական ու

գիտական ոճերին, վարչագործարարական ոճն իր բնույթով գրեթե հակադրվում է առօրյա-խոսակցականին, հրապարակախոսական ոճը համատեղում է գիտական և գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները և այլն:

Անդրադառնալով գործառական ոճերի առանձին տեսակներին՝ **Ս. Աբրահամյանը** բարձրացնում է ենթաոճերի հարցը. դրանց վերաբերյալ մինչ այդ առկա էին կցկտուր տեղեկություններ: Լեզվաբանը կատարում է ոճերի համեմատական ու զուգահրակական քննություն: Հատկանշական են հեղինակի «Պաշտոնական ոճը և նրա առանձնահատկությունները», «Գիտական ոճ» հոդվածները, որոնք նոր որակի բարձրացրին հարցի քննությունը:

Ի տարբերություն նախորդների, որոնք լեզվի տարբերակային ձևերի մասին խոսելիս գործածում են *ոճ* տերմինը, **Ս. Մելքոնյանը** նախընտրելի է համարում *լեզու* տերմինի գործածությունը՝ *գիտական լեզու, գեղարվեստական լեզու* և այլն: Լեզվաբանը տարբերակում է հինգ ոճեր (իր բնորոշմամբ՝ *լեզուներ*) *խոսակցական լեզու, գեղարվեստական լեզու, գիտական լեզու, հրապարակախոսական լեզու, պաշտոնական-գործարարական լեզու*: Ըստ Ս. Մելքոնյանի՝ խոսակցական լեզվի բառապաշարի ամենաբնորոշ շերտը դարձվածաբանությունն է: Նա գրում է. «Ոչ մի լեզվական ոճ, նույնիսկ գեղարվեստականը, այնքան հարուստ չէ դարձվածքներով, հարադիրներով, որքան խոսակցականը» (Մելքոնյան Ս., 1984): Մենք կարծում ենք, որ խոսակցական լեզուն, անշուշտ, պարունակում է դարձվածքներ, բայց գործածականությունը ներկայումս խոսակցականում այդչափ մեծ չէ, որչափ նշում է լեզվաբանը:

Հարցի ուսումնասիրության տեսանկյունից կարևոր են ոճագետ **Պ. Պողոսյանի** դիտարկումները: Նա հաղորդակցական ոլորտների ձևավորված խոսքային տարատեսակությունները անվանում է խոսքի տիպեր՝ *առօրյա-կենցաղային, գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական*, վարչագործարարական (Պողոսյան Պ., 1991):

Այս բնագավառի կարևոր աշխատանքներից է **Լ. Եզեկյանի** «Հայերենի գործառական ոճերը» մենագրությունը (1999 թ.): Հեղինակին հաջողվել է խորությամբ ուսումնասիրել նյութը, հատկանիշների հիման վրա կատարել է գործառական ոճերի դասակարգում: Լեզվաբանի կարծիքով ոճերի գործառական

դասակարգման ժամանակ նախևառաջ անհրաժեշտ է ընտրել լեզվական մի քանի կարևորագույն հատկանիշներ և միայն դրանց հիման վրա կատարել համապատասխան գիտական դասակարգում, քանի որ նման դեպքում ևս անհրաժեշտ են դասակարգման գիտական հիմնավորում, որոշակի չափանիշներ (Եզեկյան Լ., 1999): Հիմք ընդունելով իմաստաբանական, բառապաշարային, քերականական, հուզական-արտահայտչական հատկանիշները՝ հայերենում տարբերակում է գործառական ոճերի հետևյալ խմբերը՝ *գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, առօրյա-խոսակցական, գեղարվեստական*: Առանձնացնում է հինգ ոլորտ, ըստ այդմ՝ քննարկում այդ ոլորտներում գործառվող լեզվի առանձնահատկությունները: Լ. Եզեկյանը, ըստ էության, ամփոփել է հարցի մասին եղած ուշագրավ դիտարկումները՝ առաջադրելով գիտական դասակարգման սկզբունքներ: Ինչ վերաբերում է վերնագրին՝ հայերենում առանձին գործառական ոճեր չկան, հետևապես ճիշտ վերնագիրը կլիներ «Գործառական ոճերը հայերենում»:

Ընդհանուր հիմնահարցերը քննարկելուց հետո **Ա. Մարությանը**, նկատի ունենալով գրական լեզվի գործառական ոլորտները և դրանցով պայմանավորված հաղորդակցական բնույթի տարբերությունները՝ հայերենի շրջանակներում ըստ լեզվի իրացման կամ խոսքի դրսևորման ձևերի, առանձնացնում է հետևյալ գործառական ոճերը. ա) *խոսակցական ոճ*՝ հետևյալ գործառական տարբերակներով կամ ենթաոճերով՝ *ժողովրդախոսակցական, բարբառային-խոսակցական, գրական-խոսակցական*, բ) *գրական (գրավոր)* հետևյալ գործառական տարբերակներով կամ ենթաոճերով՝ *գեղարվեստական, գիտական, պաշտոնական՝ գրասենյակային-գործարարական, վարչական-իրավաբանական և վարչական-դիվանագիտական, մամուլի և հրապարակախոսության* (Մարության Ա., 2000): Նման դասակարգման դեպքում, կարծում ենք, խախտվում են չափանիշները. մի շարք ոճեր ստանում են ենթաոճի կարգավիճակ: Ոճերի նման դասակարգումը նպատակահարմար չէ:

Ժամանակակից ոճագիտության մեջ ընդունված է տարբերակել գործառական ոճերի հինգ տեսակ՝ *վարչական կամ պաշտոնական-գործարարական, գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական, առօրյա-խոսակցական* (Զաքարյան Հ.,

Ավետիսյան Յու., 2018): Հաշվի առնելով նախորդ ուսումնասիրողների փորձը՝ դասակարգելիս հաշվի են առնվում լեզվական և արտալեզվական գործոնները, ոճերի ենթաոճերն ու ժանրերը: Այսպես՝ որպես գիտական խոսքի ենթաոճեր առանձնացվում են մասնագիտական, գիտաուսումնական, գիտահանրամատչելի ենթաոճերը, պաշտոնական ոճի ենթաոճեր՝ իրավաբանական, դիվանագիտական, գրասենյակային, հաշվապահական ենթաոճերը և այլն: Յուրաքանչյուր ոճ նկարագրվում, ներկայացվում, վերլուծվում է շատ հստակ կառուցվածքով, մեթոդաբանությամբ. ընդհանուր հատկանիշներ, բառապաշար, քերականական հատկանիշներ, հնչյունական, ձևաբանական առանձնահատկություններ, շարահյուսական կառույցներ: Ուսումնասիրության չափանիշները հստակեցվեցին, դարձան առավել համոզիչ ու գիտական:

Ինչպես նկատում ենք, հայ լեզվաբանները սկզբնապես ներկայացնում էին գործառական ոճերի ընդհանուր բնութագրերը, առանձնահատկությունները, իսկ դրանց, գործառական տարբերակների առանձին խորքային քննությունները թողնում էին ստվերում: Հետագա ուսումնասիրողներն արեցին հաջորդ քայլը: **Յ. Ավետիսյանը** հրատարակեց «Պաշտոնական ոճ» գիրքը, որը նվիրված է հայերենի գործառական տարբերակներից մեկի՝ պաշտոնական ոճի քննությանը: Լեզվաբանը իրավացիորեն նշում է, որ այս ոճի առանձին, ամբողջական նկարագրություն չունենք: Գրքում հանգամանորեն ներկայացվում են այս ոճի բառագիտական և քերականական հատկանիշները, համառոտ խոսք է տրվում իրավաբանական և դիվանագիտական ենթաոճերի մասին, վերլուծվում են գրագրություններում հաճախ հանդիպող լեզվական անճիշտ կամ ոչ նախընտրելի ձևերը, հանձնարարվում են դրանց ճիշտ կամ նախընտրելի տարբերակները (Ավետիսյան Յ., 2011): Ըստ հեղինակի՝ պաշտոնական ոճը բնութագրվում է ինչպես ընդհանուր հատանկիշներով, այնպես էլ լեզվի տարբեր մակարդակներին վերաբերող նյութական բաղադրիչների՝ բառ, բառաձև, նախադասություն և այլն, գործառական յուրահատկություններով (Ավետիսյան Յ., 2011): Կարծում ենք՝ լեզվաբանին հաջողվել է հանգամանորեն ներկայացնել գիտական ոճի լեզվական ընդհանուր, բառագիտական, քերականական (մասնավորաբար՝ շարահյուսական) առանձնահատկությունները: Իրավական փաստաթղթերի լեզվին նվիրված առաջին

աշխատանքներից է **Յ. Ավետիսյանի** «Իրավաբանական գրագրության լեզուն» գիրքը: Այստեղ նկարագրվում են գրագրության լեզվական հատկանիշները, տրվում են իրավական տեքստի մշակման և խմբագրման հանձնարարականներ: Այս ուսումնասիրությունները էականորեն հարստացրին հարցի մասին եղած դիտարկումները:

Նորագույն ժամանակներում հետազոտողները լեզվի գործառական տարբերակ են համարում նաև հրապարակային խոսքը և գովազդի լեզուն, որոնք, ընդհանրություններ ունենալով ՁԼՄ-ների լեզվի հետ, միաժամանակ առանձնանում են մի շարք բնորոշ հատկանիշներով (Ավետիսյան Յ., Սարգսյան Լ., et al., 2015): Կարևորություն է տրվում հաղորդումների, ֆիլմերի, գովազդների լեզվի վերլուծությանը: **Յ. Դավթյանի** ուշադրության առանցքում է եղել արևելահայ մամուլի լեզուն, հատկապես՝ հետխորհրդային շրջանում: Նա ներկայացրել է նաև լրագրային ժանրերի լեզվաճական արտահայտությունները:

Լ. Սարգսյանի վերջին տարիներին հրատարակած «ՁԼՄ-ների լեզուն և արդի հայերենի բառապաշարի զարգացման միտումները», «Արդի հայերենի գովազդային խոսույթը. բառընտրություն և բառագործածություն», «Արդի հայերենի գովազդային խոսույթը և օտար բառերի գործածության խնդիրը», «Գովազդային խոսույթի հնչյունական և գրության յուրահատկությունները արդի հայերենում» հոդվածները փաստում են, որ ՁԼՄ-ների լեզուն աչքի է ընկնում լեզվամիջոցների բազմազանությամբ, պատկերավորման-արտահայտչական միջոցների առատ գործածությամբ: Ներկայացվում են ՁԼՄ-ների լեզվի առանձնահատկությունները. բառապաշար, քերականական հատկանիշներ, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններ և այլն: Լեզվաբանի դիտարկմամբ, փոխվել են ոճերի փոխհարաբերությունները, մասնավորաբար՝ գործառական ոճերում տեղի են ունենում փոխներթափանցումներ, փոխատեղություններ: ՁԼՄ-ների լեզվի խոր ուսումնասիրությունը հնարավորություն կտա ՁԼՄ-ների լեզուն դիտարկելու որպես գործառական առանձին ոճ՝ պայմանավորված այդ ոճին բնորոշ առանձնահատկություններով, յուրահատկություններով, գործառման ոլորտով:

Իրադրական ոճեր: Իրադրական ոճերի տարբերակման վերաբերյալ կան տարակարծություններ: Նորագույն շրջանի ոճագիտական առաջին

աշխատանքներում մատուցվում էին զուտ լեզվական գիտելիքներ իրադրական ոճերի մասին: Ըստ էության, ակադեմիկոս **Գ. Զահուկյանը** մեզանում առաջիններից էր, որ տվեց իրադրական ոճերի հստակ սահմանումը. «Ոճական այն տարբերությունները,- գրում է նա,-որոնք կախված են խոսքի իրականացման անմիջական պայմաններից, խոսողի և խոսքի առարկայի, խոսակցի և խոսողի փոխհարաբերությունից, կոչվում են իրադրական ոճերը» (Զահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., 1976): Լեզվաբանն ընդգծում է, որ որոշակի կապ կա գործառական ոճերի և իրադրական ոճերի առանձին տեսակների միջև: Ըստ նրա՝ իրադրական ոճերը լինում են *պաշտոնական, հանդիսավոր, հորդորական, մտերմական-փաղաքշական, կատակաբան, ծաղրական* և այլն: Իրադրական ոճերի ընդհանուր բնութագրերին հաջորդեցին տարաբնույթ դասակարգումներ: **Պ. Պողոսյանն** առանձնացնում է *հաղորդատվական, ուսուցողական, մտերմական, հանդիսավոր, բանավիճային, կատակահեգնական* և *երգիծական* ոճեր. ներկայացվում են յուրաքանչյուր ոճի առանձնահատկությունը: **Լ. Եզեկյանը** տարբերակում է *հանդիսավոր-պաշտոնական, մտերմիկ-փաղաքշական, հումորի և երգիծանքի (ծաղրական)* ոճերը՝ քննելով յուրաքանչյուր ոճի բառապաշարը, լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցները: Ըստ լեզվաբանի՝ իրադրական ոճերի շարքում կարելի է թվարկել *նաև ուսուցողական, խրատական, հաղորդատվական, բանավիճային* և այլ տարատեսակներ(Եզեկյան Լ., 1999):

Ըստ **Ա. Մարությանի**՝ իրադրական ոճերը խոսակցական ոճի տարբերակներն են՝ խոսողի ընդգծված վերաբերմունքով (Մարության Ա., 2000): Նա բերում է հետևյալ տեսակները՝ *տեղեկատվական, պաշտոնական, մտերմական-փաղաքշական, հանդիսավոր, երգիծական* և *կատակաբան*: **Ն. Վիրաբյանի, Լ. Սարգսյանի** ամփոփ բնութագրմամբ՝ իրադրական ոճերը խոսքի ոճերն են, իսկ գործառական ոճերը՝ լեզվի: Հեղինակները հարցի ուսումնասիրության ոլորտում գրեթե չեն հավելում նոր բան:

Իրադրական ոճերի վերաբերյալ հետաքրքրական դիտարկումներ ունի **Թ. Շահվերդյանը**: Նա ևս տարբերակում է իրադրային հետևյալ հիմնական ոճերը՝ *հանդիսավոր, մտերմիկ-փաղաքշական, երգիծական-ծաղրական, պաշտոնական*: Ըստ լեզվաբանի՝ իրադրային-ոճական տարատեսակների ըմբռնումը

լեզվաբանության մեջ դեռևս լայն տարածում չի գտել, մի շարք բանասերներ գերադասում են սրանք համարել ոչ թե տարբեր ոճեր, այլ ոճական երանգներ (Շահվերդյան Թ., 2010): Այսօր էլ առկա են տարակարծություններ իրադրական ոճերի վերաբերյալ: Մենք կարծում ենք, որ իրադրական ոճերը կարելի է դիտարկել իբրև ոճական երանգներ, քանի որ դրանք չունեն ոճական առանձնահատուկ գծեր ու հատկանիշներ, առանձնացվող տեսակին հատուկ լեզվական միջոցներ: Իրադրական առանձին ոճերի տեսությունը, ըստ էության, նոր ժամանակներում լայն ճանաչում չունի, հնացած է:

Վերջին հետազոտողները տարբերակում են իրադրական հետևյալ ոճերը՝ *չեզոք-անտարբեր, հանդիսավոր, վերամբարձ-ճոռոմաբան, մտերմական-փառաքչական, մանկաբան, ասմունքային, ծիսական-խորհրդավոր, հորդորական-խրախուսական, ուսուցողական-խրատական, կարգադրական, աղերսական, կատակաբան, հեզնական-ծաղրական, մեղադրական, գռեհիկ-հայհոյական* և այլն (Զաքարյան Հ., Ավետիսյան Յ., 2018):

Անհատական ոճեր: Բացի գործառական և իրադրական ոճերից՝ առանձնացնում են նաև անհատական ոճերը: Ոճերի այս ձևի ընդհանրական բնութագրումը հետևյալն է. «Ոճական այն տարբերությունները, որոնք հանդես են գալիս լեզվական միջոցների անհատական օգտագործման մեջ՝ կապված անհատների հակումների, բնավորության, խառնվածքի, կրթության, դաստիարակության ու ճաշակի, իրականության նրանց ընկալման հետ, կոչվում են անհատական ոճեր» (Զահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., 1976): **Գ. Զահուկյանը** տարբերակում է անհատական ոճի երեք հիմնական տեսակ՝ *բարձր կամ վսեմ, միջին կամ խառն, պարզ կամ հասարակ*՝ բնութագրելով յուրաքանչյուր ոճի հատկությունները, դրսևորումները: Ըստ **Ֆ. Խլղաթյանի**՝ անհատական ոճը յուրաքանչյուր մարդու խոսքի կառուցման ձևերի, բառերի օգտագործման առանձնահատկությունների ամբողջությունն է (Խլղաթյան Ֆ., 1976): Իսկապես, յուրաքանչյուր ոք ունի իր ուրույն ոճը՝ ոմանք սիրում են խոսել պարզ, լակոնիկ, ոմանք՝ բարդ, ոմանք գործածում են ժողովրդախոսակցական բառեր, ոմանք՝ գրքային և այլն:

Այլ հետազոտողներ փորձել են տեսականորեն համակարգել նյութը և տալ որոշակի դասակարգում: **Պ. Պողոսյանն** անհատական ոճերը բաժանում է երկու ենթախմբի՝ ա) գրելակերպի, որի մեջ կարևոր հանգամանք են դառնում մի անհատի խոսքային տարբերությունները մի այլ անհատից, բ) գրավոր ոճերի, որոնց մեջ կարևոր հանգամանք են խոսքի բովանդակությունը, լեզվական նյութը և խոսքի տեխնիկական կողմը(Պողոսյան Պ., 1991): Ըստ վերոնշյալ փոխհարաբերությունների՝ գրելակերպի ոճը բնութագրվում է *դրականորեն* և *բացասականորեն*, իսկ գրավոր ոճերը բաժանվում են երեք մակարդակի՝ *բարձր կամ վսեմ, միջին կամ խառը, հասարակ կամ ցածր*:

Ա. Մարությանը տարանջատում է «գրողի ոճ» և «գրողի լեզու» տերմինային կապակցությունները, վերլուծում է դրանք, առաջարկում լեզվի և ոճի ուսումնասիրության տարբեր հայեցակետեր: Գրողի լեզվի ուսումնասիրությունը, ըստ նրա, կարելի է կատարել երկու տեսանկյունով. առաջին՝ միայն լեզվաբանական՝ գրական ստեղծագործությունը ծառայեցնելով որպես հիմք լեզվական տվյալ իրողության բացահայտման համար, երկրորդ՝ լեզվական միջոցների ընտրության և անհատական օգտագործման առաձնահատկությունները բացահայտելու համար, որը տանում է արդեն դեպի գրողի ոճի ուսումնասիրության բնագավառ (Մարության Ա., 2000): Ըստ **Թ. Շահվերդյանի**՝ անհատական ոճական տարբերությունները հատկապես ցայտուն են դրսևորվում, երբ համեմատում ենք տարբեր գրողների լեզուն ու ոճը: Հայ ընթերցողը ծանոթ է Ռաֆֆու ու Շիրվանզադեի, Թումանյանի ու Իսահակյանի, Տերյանի, Բակունցի ու Զորյանի, Դեմիրճյանի, Շիրազի ու Սևակի, Սահյանի լեզվին, իսկ համեմատական քննությունը օգնում է երևան հանելու ոճական տարբերությունները: Վերոնշյալ և այլ գրողների ոճին, խոսքարվեստի հարցերին, խնդիրներին նվիրվել են բազմաթիվ գրքեր, ինչպես՝ Վ. Առաքելյան, «Խորենացու լեզուն և ոճը», «Գր. Նարեկացու լեզուն և ոճը», Ս. Մելքոնյան, «Ա. Իսահակյանի գեղարվեստական արձակի լեզուն և ոճը», «Հ. Թումանյանի պոեզիայի լեզուն և ոճը», Ա. Մարության, «Ե. Չարենցի չափածոյի լեզուն և ոճը», Կ. Առաքելյան, «Մ. Մեծարենցի քնարերգութեան լեզուն և ոճը», Մ. Հովհաննիսյան, «Վ. Տերյանի չափածոյի լեզուն և ոճը» և այլն:

Ժամանակակից հետազոտողները, հիմք ընդունելով Գ. Ջահուկյանի՝ անհատական ոճերի երեք հիմնական տեսակները, հարստացնում են հարցի նկարագրությունը: Անհատական բարձր ոճին բնորոշ են՝ ծավալուն բարդ նախադասությունների առկայությունը, դարձվածքների, փոխաբերությունների հաճախությունը, գրքային բառերի, արտահայտությունների առատությունը, դատողական խոսքի տարրերի հաճախությունը, գրական լեզվի կանոնների խստիվ պահպանումը: Եթե այս առանձնահատկությունները չարաշահվում են՝ բացասականորեն ազդելով հասկանալիության վրա, *բարձր* ոճը վերածվում է *խրթին* ոճի: Պարզ կամ հասարակ ոճին բնորոշ են՝ ծավալուն բարդ նախադասությունների բացակայությունը, պատկերավորման-արտահայտչական միջոցների սակավությունը, գրքային բառերի ու արտահայտությունների սակավությունը, դատողական խոսքի տարրերի հազվադեպությունը, խոսակցական տարրերի առկայությունը: Եթե այս առանձնահատկությունները չարաշահվում են՝ բացասականորեն ազդելով բովանդակության վրա, *հասարակ* ոճը վերածվում է *պարզունակ* ոճի: Միջին կամ խառն ոճին բնորոշ է բարձր և հասարակ ոճերի առանձնահատկությունների չափավոր կիրառությունը, որի շնորհիվ լիովին ապահովվում է բովանդակության հասկանալիությունը (Զաքարյան Հ., Ավետիսյան Յ., 2018):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոճերի դասակարգման հարցը հայ ոճագիտության մեջ մշտապես եղել է քննարկման առարկա: Դասակարգման սկզբունքները մշակվել են աստիճանաբար՝ հնարավորություն տալով գիտական վերլուծության նոր չափանիշների ու մեթոդների ձևավորման: Դասակարգելիս հաշվի են առնվում որոշ յուրահատկություններ: Ներկայումս հայ ոճագիտական միտքը առանձնացնում է ոճերի երեք ընդհանուր տեսակներ՝ գործառական, իրադրական, անհատական: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր ենթատեսակները, օրինակ, գործառական ոճերի հինգ հիմնական տեսակներն են՝ պաշտոնական կամ վարչագործարարական, գիտական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական, լրագրային-հրապարակախոսական: Գործառական առանձին ոճերին նվիրված ուսումնասիրություններ քիչ կան: Կան

տարակարծություններ իրադրական ոճերի տարատեսակների ըմբռնման վերաբերյալ: Ոճերի տեսակների ու ենթատեսակների քննությունը կարող է առաջ բերել լեզվական նոր փաստեր: Հայ ոճագիտական ժամանակակից աշխատանքներում սակավ են գործառական, իրադրական տարբերակների առանձին ենթատեսակներին նվիրված ուսումնասիրությունները: Եղած աշխատանքների գիտական քննությունը կարող հիմք հանդիսանալ նոր և արժեքավոր հետազոտությունների ստեղծման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ավետիսյան Յ.** (2011). *Պաշտոնական ոճ*. Երևան. Զանգակ հրատ.
- Ավետիսյան Յ., Սարգսյան Լ. et al.** (2015). *Հայոց լեզու և խոսքի մշակույթ* Vol. Բ. Երևան. ԵՊՀ հրատ.
- Եգեկյան Լ.**(1999). *Հայերենի գործառական ոճերը*. Երևան. ԵՊՀ.
- Եգեկյան Լ.**(2006). *Ոճագիտություն*. Երևան. ԵՊՀ.
- Զաքարյան Հ., Ավետիսյան Յ.,** (2018). *Ոճագիտություն, տեքստագիտություն, հայոց լեզվի պատմություն*. Երևան. Զանգակ հրատ.
- Խլղաթյան Ֆ.** (1976). *Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու*. Երևան. Լույս հրատ.
- Մարության Ա.** (2000). *Հայոց լեզվի ոճաբանություն*. Երևան. Նաիրի հրատ.
- Մելքոնյան Ս.** (1984). *Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության*. Երևան. Լույս հրատ.
- Շահվերդյան Թ.** (2010). *Ոճագիտություն*. Երևան. Լուսակն հրատ.
- Պողոսյան Պ.** (1990). *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ: Vol. Ա.* Երևան, ԵՊՀ.
- Պողոսյան Պ.** (1991). *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ* Vol. Բ. Երևան. ԵՊՀ.
- Պողոսյան Պ.** (1975). *Ոճագիտական ըմբռնումների ծագումն ու զարգացումը Հին Հունաստանում և Հռոմում*. Երևան. Երևանի համալսարանի հրատ.
- Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ.,** (1976). *Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն*. Երևան. Լույս հրատ.

- Վահանյան Գ.** (1956). *Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ*. Երևան. Հայպետտումանկիրատ.
- Վիրաբյան Ն., Մարգարյան Լ.** (2007). *Հայոց լեզու. Ոճաբանություն*, Երևան. Զանգակ հրատ.
- Купина Н. А., Матвеева Т. В.** (2013). *Стилистика современного русского языка*. Москва. Юрайт.

REFERENCE LIST

- Avetisyan YU.** (2011). *Formal'nyj stil'(Formal style)*. Erevan. Zangak izd.
- Avetisyan YU., Sargsyan L. i drugie.** (2015). *Armyanskij yazyk i kul'tura rechi(Armenian language and culture of speech)*, kniga B. Erevan. izd. EGU.
- Ezekyan L.** (1999). *Funkcional'nye stili armyanskogo yazyka(Functional styles of the Armenian language)*. Erevan. Erevanskij universitet izd.
- Ezekyan L.** (2006). *Stil'(Style)*. Erevan. Erevanskij universitet izd.
- Zakaryan G., Avetisyan YU.** (2018). *Stilistika, tekstologiya, istoriya armyanskogo yazyka(Stylistics, textology, history of the Armenian language)*. Erevan. Zangak izd.
- Hlgatyan F.** (1976). *Slovar'-spravochnik stilisticheskikh terminov(Dictionary-reference book of stylistic terms)*. Erevan. Lujs izd.
- Marutyan A.** (2000). *Stilologiya armyanskogo yazyka(Stylology of the Armenian language)*. Erevan. Nair izd.
- Melkonyan S.** (1984). *Nameki na stilistiku armyanskogo yazyka(Hints on the style of the Armenian language)*. Erevan. Lujs izd.
- SHahverdyan T.** (2010). *Stil'(Style)*. Erevan. Lusak izd.
- Pogosyan P.** (1990). *Osnovy kul'tury rechi i stilistiki, kniga pervaya(Fundamentals of culture of speech and style, book one)*. Erevan, EGU.
- Pogosyan P.** (1991). *Osnovy kul'tury rechi i stilistiki, kniga vtoraya(Fundamentals of the culture of speech and style, book two)*. Erevan. Erevanskij universitet izd.

- Pogosyan P.** (1975). Zarozhdenie i razvitie stilisticheskikh predstavlenij v Drevnej Grecii i Rime (*The origin and development of stylistic ideas in ancient Greece and Rome*). Erevan. Erevanskij universitet izd.
- Dzhaukyan G., Hlgatyan F.** (1976). Armyanskij yazyk: Obshchie znaniya. Stil' (*Armenian language: General knowledge. Style*). Erevan. Lujs izd.
- Vaganyan G.** (1956). Uchebnik po stilistike armyanskogo yazyka (*Textbook on the style of the Armenian language*). Erevan. Hajpetusmanhrat.
- Virabyan N., Margaryan L.** (2007). Armyanskij yazyk. Stil' (*Armenian language. Style*). Erevan. Zangak izd.
- Kupina N. A., Matveeva T. V.** (2013). Stilistika sovremennogo russkogo yazyka (*The style of the modern Russian language*). Moskva. YUrajt.

ABSTRACT

THE PROBLEM OF CLASSIFICATION OF STYLES IN THE ARMENIAN STYLIST STUDIES (FROM THE 1950S TO THE PRESENT DAY)

BERBERYAN VALTER

Stylistics was formed in modern times. The first concepts of stylistic phenomena were formed in Greece. Questions and problems of style were addressed by Socrates, Aristotle, Plato, Democritus and others from the ancient world thinkers. The ideas of Greek and Roman thinkers, having traveled a long way, have not lost their relevance and value. All this has been written about in the works of various Armenian and foreign linguists.

In the article, we have studied the works written about phonetic stylistics of the Armenian language, the provisions in various researches. Reference was made to the different principles of classification of styles according to the situation, characteristics of the author's speech (individual styles) and so on. We have presented the functional styles that have become widespread in modern Armenian stylistics, the main types: official or formal, scientific, artistic literary, casual or informal, oratorical speaking (the language of

Media). The methodological basis is the combination and analysis of existing theoretical provisions.

Key words: stylistic thought, functional, individual styles, classification, general characteristics, imagery, stylistic value.

РЕЗЮМЕ
ПРОБЛЕМА КЛАССИФИКАЦИИ СТИЛЕЙ В АРМЯНСКОМ СТИЛИСТИЧЕСКОМ
ИЗУЧЕНИИ (1950-Е ГОДЫ ДО НАШИХ ДНЕЙ)
БЕРБЕРЯН ВАЛЬТЕР

Стилистика сформировалась в новое время. Первые понятия о стилистических явлениях сформировались в Греции. К вопросам и проблемам стиля обращались Сократ, Аристотель, Платон, Демокрит и другие мыслители древнего мира. Идеи греческих и римских мыслителей, пройдя долгий путь, не утратили своей актуальности и значения. Обо всем этом написано в работах различных армянских и зарубежных лингвистов.

В этой статье мы изучили работы, написанные о фонетической стилистике армянского языка, положения в различных исследованиях. Обращались на разные принципы классификации стилей по ситуации, характеристикам авторской речи (индивидуальные стили) и т.д. Представлены функциональные стили, распространенные в современной армянской стилистике, основные типы: официальный, научный, литературно-художественный, разговорный, ораторская речь (язык медиа). Методологической основой является сочетание и анализ существующих теоретических положений.

Ключевые слова: стилистическая мысль, функциональные, индивидуальные стили, классификация, общая характеристика, образность, стилистическое значение.

Հոդվածը ստացվել է՝ 14.05.2023

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 18.05.2023

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 27.07.2023